

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/6**

**1 հուլիսի 2014 թ.**

Քննարկվեց «ՄՄՄ» ՍՊԸ 11.06.2014 թ-ի վարչական բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի կողմից 2014 թ-ի մայիս ամսին ընդունված մի շարք որոշումների դեմ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ «ՄՄՄ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) 11.06.2014 թ-ի վարչական բողոքը ներկայացվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջների խախտմամբ: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն. «Բողոքը պետք է պարունակի՝ ...

է) բողոք բերող անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից բողոք բերող անձի ստորագրությունը»:

Քննարկվող դեպքում 11.06.2014 թ-ի վարչական բողոքը «ՄՄՄ» ՍՊԸ անունից բողոք բերած անձի, այն է՝ ընկերության տնօրենի կողմից ստորագրված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ՄՄՄ» ՍՊԸ 11.06.2014 թ-ի վարչական բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«ՄՄՄ» ՍՊԸ 11.06.2014 թ-ի վարչական բողոքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը կարճել:

**Հանձնաժողովի նախագահի Ժ/պ**



**Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ**